



Уважаемые читатели, вашему вниманию представляем русско-армянский разговорник с переводом на диалект донских армян. Он рассчитан на широкий круг читателей, не владеющих армянским языком и желающих овладеть его основами, а также ознакомиться с оригинальным нахичеванским диалектом донских армян.

Наиболее употребительные слова и выражения. Русский текст, литературный текст и диалект

Аппетит – ахоржак – штаф, а то – т’э чэ – чэнэ, баловство – чарутюн – чарутин, барахтаться – т’ыпыртал – чапала-миш ылал, безразлично – антарбэр – дэми-диз, бесслатный (даром) – анвчар, дэри – инбэс, аранц стаги, беспокоиться – анһангстанал – хасэ-вэт анэл, болота – ч’аһич’ – батхах,

большой – мэц – мэц, балабан, блестящий – п’айлун – цолун, бросать, бросить – нэтэл, гыцэл – таблэл, быстро – арагорэн – зыхи, вызэлэн, бутон – кокон – гочат, валяться, кататься – т’аваллвэл – ав-ламиш ылал, веселиться – ураханал – кэф анэл, весть – лур – хабэр, вечер – ерэк – иргван, видный – тэсанэл – бэльні, видно – ерэвум э – гэрва, виноватый – мэхавор – хабаратвор. Используем материал из книги А.Г. Малхасяна «Русско-армянский разговорник», Ростов-на-Дону, 2008г.

Նորություններ

Չավախքում կարող է հայկական բուհ հիմնադրվել
Հայաստանի Հանրապետության գիտության և կրթության նախարարը դիտարկում է Վրաստանի հայաբնակ Չավախքում մասնավոր բուհ հիմնադրելու հնարավորությունը վրացական օրենսդրության համաձայն: Այս մասին ասել է ՀՀ գիտության և կրթության նախարար Արմեն Աշոտյանը: «Այդ ուսումնական հաստատությանը կարող է գործընկերային աջակցություն ցուցաբերել որևէ հայկական բուհ՝ ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական», - ասել է նախարարը: Այսօրվա դրությամբ Չավախքի հայերը կանգնած են մի շարք չլուծված խնդիրների առաջ՝ կապված մասնավորապես կրթության ու լեզվի հետ, քանի որ Չավախքի բնակչության հիմնական մասն ընդհանրապես վրացերենի չի տիրապետում: Նրա խոսքերով՝ սա կրթության հետ կապված խնդիր հնարավոր լուծում է Չավախքում:

Հայերն ամենաշատն են Վրաստանի ծովափնեքում
Եթե 2008 թ. Վրաստանում զբոսաշրջության սեզոնը մթազնվել էր օգոստոսյան դեպքերի պատճառով, ապա այս տարի վրացական սևծովյան ափերը կրկին մեծ թվով զբոսաշրջիկներ են ընդունել: Չնայած քաղաքական անկայունությանն ու հակամարտությունների առկայությանը՝ Վրաստանը բավականին հետաքրքրական է օտարերկրյա զբոսաշրջիկների՝ հատկապես հարևան երկրներից այցելուների համար: Ըստ պաշտոնական տվյալների՝ երեք ամառային ամիսների ընթացքում Աջարիայի հանգստյան վայրերում հանգստացել է 420 հազ. մարդ: Չի բացառվում, որ Աջարիա այցելող զբոսաշրջիկների թիվը ամառային սեզոնի ընթացքում կհասնի ընդհուպ մինչև 500 հազարի: Առավել շատ Աջարիայում հանգրստացել են հայեր, այնուհետև թուրքեր և ադրբեջանցիներ: Եղել են նաև հանգստացողներ Ուկրաինայից, Ռուսաստանից և այլ երկրներից:

Ռուսական ավտոմեքենաները կհավաքվեն Հայաստանում



Ռուսաստանի Դաշնության Ուլյանովսկի մարզը և Հայաստանը ծրագրում են «ՈւԱՁ» ավտոմեքենաների վաճառքի ցանց ստեղծել Հայաստանում: Այս մասին հայտարարել է Ուլյանովսկի նահանգապետի մամուլի քարտուղար Դմիտրի Շիկովը: Նրա խոսքերով՝ Ուլյանովսկի նահանգապետ Սերգեյ Մորոզովը երևան կատարած այցի շրջանակներում տնտեսական համագործակցության վերաբերյալ բանակցություններ է վարել Հայաստանի ղեկավարության հետ: Նահանգապետն առաջարկել է Հայաստանի տարածքում «ՈւԱՁ» ավտոմեքենաների վաճառքի ցանցեր, ինչպես նաև մեքենաների հավաքման կետեր ստեղծել՝ Ուլյանովսկի մեքենաշինական գործարանից բերված մասերով:

Հայոց ցեղասպանության զոհերի հուշարձան՝ Մոսկվայում

Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշարձան կտեղադրվի Մոսկվայում: Հայդրդագրության համաձայն՝ Մոսկվայի քաղաքային Դումայում կայացել է Մոսկույի նախարարության կողմից հանձնարարված զոհերի հիշատակին նվիրված հուշարձանի նախագիծը, որը ստացվել է Ռուսաստանի հայերի միությունից: Հայոց ցեղասպանության զոհերին նվիրված ճարտարապետական կոմպոզիցիա տեղադրվելու մասին առաջարկը, որը ստացվել է Ռուսաստանի հայերի միությունից: Հայոց ցեղասպանության զոհերին նվիրված ճարտարապետական կոմպոզիցիան կարող է դրվել կառուցվող Հայ առաքելական եկեղեցու Ռուսաստանի և Նոր-Նախիջևանի թեմի Մայր տաճարի տարածքում:



ԻՆՆ ԵՐԱՆԻՆԵՐ

2. «Երանի նրանց, որ սրտով սուրբ են, քանզի նրանք Աստծուն պիտի տեսնեն»

Սրտի սրբությունը լրումն է բոլոր առաքիճությունների, ճգնությունների և հոգևոր գործերի: Ցանկացած մաքրություն, ցանկացած հոգևոր ձեռքբերում հեշտությամբ կարելի է կորցնել, եթե մարդ չունի սրտի սրբություն: միտքը դյուրությամբ կարող է ապականվել, ցանկությունները՝ փխտերով բորբոքվել, սակայն սրտի սրբությունը պահպանվել է չարի փորձություններից և հարձակումներից: Երբ մարդն ունի սուրբ սիրտ, նրա հոգու աչքերը բացվում են, և նա ձեռք է բերում ներքին-շնորհական տեսողություն և սկսում է ճանաչել հոգևոր ոլորտը: Հայերը սիրտն անվանում են խորհուրդների շտեմարան, Ս. Հոգու շարժումների ընդունարան, խորհրդակիր սենյակ և այլն: Սիրտը մարդու հոգևոր կենտրոնն է, այնտեղից են ելնում խորհուրդները, եթե մարդու խորհուրդները մաքուր են, ապա մարդը հասել է ճշմարիտ հոգևոր մաքրության և դարձել Ս. Հոգու տաճար: Ըստ հայերի՝ հոգևոր պայքարը նախ և առաջ խորհուրդների մեջ է, և ով ուզում է

հաճո լինել Տիրոջը, նա պետք է սրբի իր խորհուրդները կամ մաքրի իր սիրտը: Այս երանին հաստատում է, որ սրտի սրբություն ունեցողները կարժանանան աստվածատեսության: Ըստ եկեղեցու վարդապետության՝ Աստծո բնությունն ու էությունն անտեսանելի և անճանաչելի են արարածների համար, որովհետև աստվածային անսահմանությունը հնարավոր չէ բովանդակել մարդկային սահմանափակության մեջ: Սակայն Աստծո Միածին Որդու մարդեղությանը, Աստծո և մարդու ճշմարիտ միավորումով հաստատվեց աստվածագիտության մի նոր ճանապարհ, որ հնարավոր չէ իրագործել որևէ կրոնի կամ ուսմունքի մեջ, որովհետև Անբովանդակելի բովանդակվեց, Անսահմանը և Անճանանկը մտավ չափավորության և ժամանակի մեջ: Արարածի համար հնարավոր դարձավ հավատքով միավորվել իր Արարչի հետ, մարդը դարձավ Անճանատուրը Երրորդության բնակարան: Քրիստոնյայի համար Աստված ոչ թե վերացա-

կան հայեցողության և խոկունների առարկա է, այլ խիստ որոշակի իրականություն, Որի հետ նա հաղորդակցվում է, Որին նա ճաշակում է (Ս. Հաղորդություն): Քրիստոնյան ճաշակում է Նրան, Ով անհասանելի է ամեն տեսակ մտքի, խոսքի և ճանաչողության համար: Քրիստոնեության մեջ Աստված հայտնում է Իրեն ըստ մարդկանց հավատքի ու սրբության աստիճանի: Այս հայտնությունը տեղի է ունենում շնորհի ներգործությամբ, որը մարդուց պահանջում է սրբության որոշակի աստիճան. մարդը պետք է որոշակի ճիգերով բացազատի իր սիրտը Աստծո սրբարար շնորհի առջև: Եվ Աստված իր ընտրյալ անոթներին ոչ միայն արժանացնում է Իր երանավետ տեսուկանը և Իր լուսավոր հարությանը, այլ նաև միավորվում է մարդու հետ և աստվածացնում մարդուն՝ ըստ Իր անսահման սիրտ, որի համար Աստծո Որդին մարդացավ և խաչվեց մեր մեղքերի համար: «Գանձասար» աստվածաբանական կենտրոն

Քաղաքականություն

ՌԻԶԱՐԴ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ «ԹՈՒՐՔԻԱՆ ԴԱՆԴԱՂ ՔԱՅԼԵՐՈՎ ՇԱՐԺՎՈՒՄ Ե ԴԵՊԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՆԱԶՄՈՒՄ»

Այս մասին հայտարարել է ամերկահայ վերլուծաբան, Ռազմավարական և ազգային հետազոտությունների կենտրոնի ղեկավար Ռիչարդ Կիրակոսյանը: «Անցն արժեք կանգնած ենք պատմական շրջադարձի նախաշեմին: Համոզված եմ, որ մենք չենք տեսնի որևէ զարգացում մինչև ապրիլի 24-ը և հետո, բայց հարաբերությունները միջև կլինի փոփոխություն մինչև տարվա վերջ: Շատ աղբյուրներից ակնհայտ է դառնում, որ հայ-թուրքական հարաբերությունների փոփոխությունը բաղադրված է չորս մասից: Առաջինը սահմանների բացումն է, երկրորդը՝ դիվանագիտական հարաբերությունների առաջխաղացումը, երրորդը՝ միջկառավարական երկկողմանի հարաբերությունների հաստատումը, բայց ոչ պատմական հանձնաժողովի կազմում, որտեղ պատմական հանձնաժողովը շատ խնդիրներ ունի՝ առևտրից մինչև մշակութային: Չորրորդ նախնական կետը թուրքական փաստաթուղթն է, որը կոչվում է Ղարաբաղի ճանապարհային քարտեզ: Այս փաստաթուղթը ընդհանուր է և ընդգրկում է Մինսկի խմբի ծրագիրը: Փաստաթուղթն իր բնույթով այլ նպատակի է ծառայում՝ վերահաստատում է Ադրբեջանին: Իմ կարծիքով՝ ինչ էլ պատահի, եթե նույնիսկ Հայաստանի սահմանները բացվեն, ամենակարևորն ինձ համար այն է, որ թուրքիայի և Ադրբեջանի միջև համագործակցությունը ավարտին է հասցվում: Կոնցեպցիան՝ մեկ ազգ և երկու երկրներ, մահանում է. և այդ դեպքում՝ յուրա-

քանչյուր քայլ, որ թուրքիան կատարում է դեպի Հայաստան, հեռացնում է թուրքիային Ադրբեջանից: Սա ընդհանուր առմամբ լավ է Հայաստանի համար, բայց կարճաժամկետ առումով վտանգ է ներկայացնում Հայաստանի համար, քանի որ Ադրբեջանը կօգտագործի ավելի շատ միջոցներ պատերազմի համար», նշում է վերլուծաբանն ու ավելացնում ու մատնանշում Հայաստանի համար ու մեկ վտանգ. «Ադրբեջանը կբարելավի իր հարաբերությունները Մոսկվայի հետ, Ռուսաստանը կհեռանա Հայաստանից և հայկական մոտեցումից»: Ռուսաստանի շահագրգռվածությունը, ըստ նրա, կապված է սեփական շահերի հետ, այն է՝ Մոսկվան ցանկանում է մեկուսացնել Վրաստանին: Անդրադառնալով Հայաստանին վերաբերող Օբամայի հայտարարություններին՝ Կիրակոսյանը նշել է, որ ՄԱՆ նախագահի ասածը շատ պարզ էր ու հսկայանալի, նա չի փոխել իր դիրքորոշումը Հայոց ցեղասպանության փաստի շուրջը: Ըստ նրա, պարզ է նաև, որ թուրքիան է հետամզում Հայաստանի հետ հարաբերությունները կարգավորող համաձայնագրի ստորագրումը՝ սպասելով ապրիլի 24-ին: Նրա խոսքով՝ հնարավոր է, որ Օբաման աջակցի Կոնգրեսին և ստորագրի ցեղասպանության մասին այն նախագիծը, որ կներկայացնի Կոնգրեսը: «Օբաման, որպես քաղաքագետ, փորձում է բալանս ստեղծել. նրա հայտարարությունը թուրքիայում հայանետ էր, բայց



ամերիկացիները հասկացել են, որ ԼԴՀ խնդիրը նախապայման չէ հայ-թուրքական հարաբերությունների համար: Նույնիսկ թուրքիան չի ցանկանում Ղարաբաղի հարցում լինել հիմնային կետ», նշել է քաղաքագետը: Իսկ թե ինչ ազդեցություն կունենա հայ-թուրքական սահմանի բացումը Հայաստանի համար, ապա Ռ. Կիրակոսյանն այստեղ ոչ մի բացասական ազդեցություն չի տեսնում: «Հայ-թուրքական սահմանների բացումը կարող է դեղամիջոց լինել Հայաստանի ներքին կյանքի համար՝ օլիգարխներից ու կոռուպցիայից ազատվելու համար», հայտարարել է Ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոնի տնօրենը: Ն. Ս.